

ՆՈՐԱՅՐ ԲՅՈՒՋԱՆԴԱՑՈՒ ԱՆՏԻՊ ՆԱՄԱԿՆԵՐԻՑ

Անվանի հայազետ Նորայր Բյուզանդացին (1845—1915) նամակագրական կապի մեջ է եղել ինչպես հայ, այնպես էլ օտարազգի մի շարք արևելագետների հետ:

Նորայր Բյուզանդացու ստորև հրապարակվող նամակները, որոնք ուղղված են իտալացի արևելագետ-եդիպագետ Չեզարե դը Կարային, ֆրանսիացի հայազետ Գ. Շրոմպֆին, գերմանացի արևելագետ-հայազետ Ֆ. Մյուլլերին և Ուսսալայի (Շվեդիա) համալսարանի դասախոս, արևելագետ Կ. Ջետերստենին, ունեն հայագիտական որոշակի արժեք: Ձ 5 նամակն ընթերցողին է ներկայացվում աննշան կրճատումներով:

Նամակների բնագրերը (ֆրանսերեն) պահվում են Մ. Մաշտոցի անվան Մատենադարանում (ֆ. 70, Թղթ. 235ր, վավ. 246, 247, 248):

ԱՐՄՎԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ՎԱՐԱՋԴԱՏ ՎԱՐԴԱՆՅԱՆ

1

Նորայր Բյուզանդացին Չեզարե դը Կարային

12 մայիսի, 1890 թ.

Հարգույապատիվ հայր

Երկու շաբաթ առաջ ստացա հեթիթենեի վերաբերյալ ձեր գրքույկը և մեծագույն հետաքրքրությամբ կարդացի ձեր շափազանց դիտական քննախոսությունը: Անշափ շնորհակալ եմ և համարձակվում եմ ձեզ խնդրել բարեհաճելու ինձ ուղարկել ձեր ուսումնասիրության շարունակությունը:

Հայերենում մենք ունենք ս. Եփրեմի Սուրբ գրոցի վերաբերյալ մեկնությունների¹ թարգմանությունը, մի թարգմանություն, որը թվագրվում է 5-րդ դարի սկզբով: Ահա թե ինչ է ասում ս. Եփրեմը «Թուոց գրքի» վերաբերյալ մեկնություններ² 12-րդ դարի 1-ին տան առթիվ:

«Եվ մի այլ հույն գրող, որի անունն է Արտեմենոս, գրում է հետևյալը. «Երբ որ Եգիպտոսում թագավորներ եղան, Փալմոնթեսը իշխեց Հելիոպոլիսին և նա ատում էր հրեաներին: Նա մի աղջիկ ունեցավ, Մառի անունով, որին կնություն տվեց Մեմֆիս քաղաքի թագավոր Քանեփրային: Մառին նույն Ռագուզան է, այն որ որդեգրեց Մովսեսին: Եվ երբ որ Մովսեսը մեծացավ և երբ որ կառուցեց Հերմոպոլիս քաղաքը, տասը տարի պատերազմեց եթովպացիների ու թեբեացիների դեմ: Մառիի մահվանից հետո, որը որդեգրել էր Մովսեսին, նրա ամուսին Քանեփրան սպառնում էր սպանել Մովսեսին: Մառին թաղեցին Եգիպտոսում և նրա անունով կոչեցին Մորիա քաղաքը: Մովսեսը, իմանալով Քանեփրայի շարամիտ դիտավորության մասին, սպանեց Քանեթեզային, այն մարդուն, որն ուզում էր սպանել իրեն, և ապաստանեց Արաբիայում՝ Ռագելի մոտ, (վերջինս) նրան կնության տվեց իր աղջկան»:

Այս նույն պատմությունը համառոտ կերպով կրկնվում է 12-րդ դարի հակորիկ ասորիների պատրիարք Միքայելի ժամանակագրության մեջ: Այդ ժամանակագրության ասորերեն ռնդիրը մեզ չի հասել, սակայն մենք ունենք դրա հայերեն թարգմանությունը, որը թվագրվում է 13-րդ դարով: Միքայելն ասում է թե. «Նրբ Մովսեսին նևտեցին Նեղոսի մեջ, նա փրկվեց Թերմուծեսի կողմից, ուրիշ եբրայեցիները անվանում են Մաուի, Ամենոֆթիս փարավոնի դուստրը, և Մաուին դառնում է Քանափրայի, Մենֆիսի թագավորի կինը»³: Նրա անունն է Քսանթիս, անձնավորություն, որին ս. Նփրեմը անվանում է Քաննոթեզա և նա ասում է, որ դա Քսանթիսն էր, հոգաբարձուն այն արարքների, որոնց դատապարտված էին Իսրայելի որդիները:

Մեծարգո Հայր, ես անշափ երախտապարտ կլինեմ, եթե բարեհաճեք ինձ ասել, թե արդյոք կա Արտեմենոս անունով հույն գրող և արդյոք այս բոլոր պատմվածների հիմքում ճշմարտություն կա:

Կինս ձեզ է հղում իր լավագույն հաճոյախոսությունները: Նա շուտով ձեզ կողարկի մի փոքր կապոց, որ խնդրում է ընդունել ձերդ բարյացակամությունը ու սովորական ներողամտությամբ:

Մեծարգո Հայր, խնդրում եմ ընդունել անկեղծ հարգանքներիս հավաստիքը՝

Ն.

2

Նորայր Իշուզանդացին Ձեզարե դը Կարային

28 մայիսի, 1890 թ.

Մեծարգո Հ. Ձեզարե դը Կարա

Ստացա խեթերի տեղափոխության վերաբերյալ ձեր երկրորդ հոգվածը և ձեզ եմ հղում իմ խորին շնորհակալանքները: Շնորհակալություն եմ հայտնում նույնպես այն տեղեկությունների համար, որ բարեհաճել եք ինձ տալ ս. Նփրեմի պատմությունների ու Միքայել Ասորու ժամանակագրության վերաբերյալ: Ինձ համար մեծագույն պատիվ է լուսաբանություններ ստանալ մեր ժամանակի ամենաերեւելի եգիպտագետից և իմ խորին երախտիքն եմ հայտնում: Կինս և ես անշափ զգացված ենք, որ հիշում եք մեզ, Մեծարգո Հայր: Մի քանի օր է. ինչ իմ կինը ձեզ է ուղարկել տասներկու հատ ձեր լուսանկարներից և ձեզ հղում է իր լավագույն մեծարանքները: Ես նույնպես, Մ. Հ., խնդրում եմ ընդունել հարգանքներիս խոր հավաստիքը:

Ն.

3

Նորայր Իշուզանդացին Ձեզարե դը Կարային

21 նոյեմբերի, 1890 թ.

Հարգոյապատիվ հայր Գ. դը Կարա

Վերջին անգամ ստացա հեթիթների վերաբերյալ ձեր գիտական քննախոսության 5—6 մասերը, որոնք ընթերցելը շատ հետաքրքիր էր, օգտավետ և ես ձեզ իմ անսահման շնորհակալությունն եմ հայտնում: Ես ձեր գրքակնքներից ստացել եմ միայն չորս հատը (1, 2, 5, 6) և ձեզ երախտապարտ կլինեմ, եթե հաճեք ինձ ուղարկել 3 և 4 մասերը:

Անկասկած, գուր ծանոթ եք Պաղուայի համալսարանի պրոֆեսոր պ. էմիլիո Տեղային¹, որը հայերենը կատարելապես գիտե և ժամանակ առ ժամանակ հրատարակում է հայ գրականության վերաբերյալ չափազանց հետաքրքրական հոդվածներ: Այսօր ձեզ հմ առաքել նրա երկու գրքուկները՝ *Cose Armene* և *Una Lettera di Giovanni Mandacuniense*²: Այդ գրքուկներից առաջինում պ. է. Տեղան բարյացակամություն է ունեցել խոսել իմ համեստ աշխատությունների մասին, որոնցից ըստ տարեթվի առաջինը Հայկական բառաֆենոթյունն է³ (*Cose Armene*, էջ 21—22): Դա այն փոքրիկ աշխատությունն է, որ դուք կգտնեք միևնույն կապոցում և ձեզ խնդրում եմ, հարգոյապատիվ Հայր, ընդունել ի հիշատակ արևելագետների Ց-րդ համաժողովի⁴:

Իմ կինը միշտ հիշում է ձերդ հեղահամբուրությանը և շատ երջանիկ է, որ լուսանկարել է ձեզ: Շուտով նա ձեզ կուղարկի մի տասներկու լուսանկար և մնալով սպասող, ձեզ է հղում իր լավագույն հաճոյախոսությունները:

Հարգոյապատիվ հայր, ընդունեք հարգանքներիս

հավաստիքը:

Ձերդ խոնարհ ծառա

Ն. Ն. Բյուզանդացի

4

Նոռայր Բյուզանդացին Գ. Ա. Շումպֆին

22 հունվարի, 1891 թ.

Պարոն

Ստացա ամսույս 17-ի ձեր նամակը և այսօր ձեզ ուղարկեցի մի պատվիրված կապոց, որը պարունակում է հետևյալ աշխատությունները.

1 օրինակ իմ Հայկական բառաքնությունից:

1 օրինակ Վ. Հյուգոյի Փարիզի Աստվածամոր տաճարի նուբարյանի կողմից արված թարգմանության վերաբերյալ իմ քննադատության:

Իմ Քննասերի¹ 1-ին և 2-րդ պրակների կրկնակի 2 օրինակները:

Ասողիկի Պատմության երկրորդ հրատարակության² վերաբերյալ իմ ծանոթագրություններից³ 1 օրինակ:

Փոխարենը երախտագիտությամբ կընդունեմ այն ամենը, ինչ բարյացակամություն կունենաք ինձ ուղարկել հայ գրականության վերաբերյալ ձեր հրատարակություններից, հատկապես «Հայերեն ուսումնասիրությունները» նվերոպայում» խորագրով ձեր հոդվածը, որի մի մասին ծանոթ եմ *l'Arménie*-ի⁴ միջոցով (Ֆրանսերեն հրատարակություն):

Խնդրում եմ ձեզ, բարեհաճել պ. Մինաս Զերսիզի⁵ հանձնել Քննասերի մյուս երկու օրինակները: Նա շնորհ է արել շորս անգամ ինձ ուղարկել *l'Arménie*-ն: Դուք անշափ բարեհաճ եք, որ հետաքրքրվում եք իմ լույս ընծայված աշխատություններով: Քննասերի 1-ին պրակի Նախնի⁶ հոդվածը ձեռք բավարար չափով կծանոթացնի, թե վաղուց ի վեր ինչպիսի ընդարձակ ծրագիր եմ նախագծել: Սակայն ուսանց չարությունը, ուսանց էլ անտարբերությունը ինձ երբեք թույլ չեն տա իրականացնել մի աշխատություն, որը

միայնակ եմ հղացել ու փափագել և որը այնքան մոտ էր իմ սրտին, 1867 թվականից ես հանգեցի այն եզրակացության «որ ճայ գրականությունն արդյունավետ կերպով ուսումնասիրելու համար ամենից առաջ անհրաժեշտ է ձևերի տակ ունենալ բնագրեր, որտեղից հնարավորին չավել դուրս չպրտած կլինեն գրիչների աղավաղումները», ինչպես դուք էլ շատ լավ նշել եք l'Arménie-ի 1891 թ. հունվարի 15-ի համարում, իմ հրատարակումներին ոչ մի կարևորություն չտվեցին, խուլ մնացին իմ աղաչանքներին, Ավելի վատ, ես այլևս մտադիր չեմ քարոզ կարդալ ամայության մեջ, Այժմ ես աշխատում եմ լուկ իմ հաճույքի և իմ անձնական բավարարության համար՝ ջանալով վերականգնել մեր հին գրողների բնագրերը, որոնք բոլորը շատ թե քիչ կոպիտ ձևով աղավաղված են գրիչների անգիտության հետևանքով։ Այնտեղ, որտեղ հանդիպում են անհասկանալի հատվածներ, աշխատում եմ լուսաբանել դրանք։ Եղնիկ, Սեբեոս, Մատթեոս Ուռհայեցի և նրանք, որոնք հրատարակված են՝ անհեթեթ ու ծիծաղելի աշխատություններ են։ Մովսես Խորենացու Պատմության մեջ միակ ճիշտ բանը Մովսես Խորենացու անունն է, Երկու հարյուրից ավելի սխալներն անշուք են դարձնում Ազաթանգեղոսի հիասքանչ գիրքը, էլ ինչ ասեմ հայերեն Աստվածաշնչի մասին, մեր ամբողջ գրականության գլուխգործոցի, որը պարունակում է այնքան սխալական ընթերցվածներ, այնքան ողբալի հակասություններ, Հուսով եմ մի քանի տարում հրատարակել իմ Նախնի՝ աշխատությունը⁶, որի մեջ վերամշակել ու մեկնել եմ մեր հին հեղինակներից 10000 հատվածներ, Ասողիկի Պատմության վերաբերյալ իմ բանասիրական հետազոտություններն ու ծանոթագրությունները բավարար են, որ դուք կարծիք կազմեք այդ բոլորի մասին։

Իմ Բառաբանությունում, 102 էջում դուք կգտնեք իմ հայերեն մեծ բառարանի⁷ նախագիծը, Մյուս կողմից ես աշխատում եմ Ստորին հայերենի բառարանի⁸ վրա, որի մեջ տեղ են գտել անկման շրջանի մեր հեղինակների օգտագործած բառերն ու դարձվածքները՝ սկսած 12-րդ դարից մինչև 18-րդ դարը։ Այս բառարանի օգնությամբ մի օտարազգի հայագետ կկարողանա, օրինակի համար, թարգմանել Սմբատ Սպարապետի «Ժամանակագրությունը»։ Վենետիկի Մխիթարյանների հայերեն—հունարեն—լատիներեն մեծ բառարանը չէր կարող մեծ ծառայություն մատուցել պ. Դյուլորիեյին՝ Մատթեոս Ուռհայեցու⁹ իր թարգմանության գործում, մի բան, որ բոլորովին զարմանալի չէ, քանզի կլասիկ հայերենի ու անկման ժամանակաշրջանի հայերենի միջև սար ու ձորեր կան։

Պարոն, ահա այն ամենը, ինչ փափագում էիք իմանալ իմ աշխատությունների վերաբերյալ, Եթե հայ հեղինակների մեկնաբանման գործում կարող եմ ձեզ օգտակար լինել, ապա շատ երջանիկ կզգամ ինձ։ Անչափ շատ եմ սիրում այն օտարազգի գիտնականներին, ովքեր լրջորեն զբաղվում են մեր հին գրականության ուսումնասիրությամբ և ովքեր հետաքրքրվում են դժբախտ հայ ազգի տխուր ճակատագրով։

Քննասերի 1-ին պրակի լույս ընծայվելուց հետո, Կառլստնի վիմագրությունը երեք ամիս շարունակ փակված էր, ահա թե ինչու Բեռլինի ձեռագրավաճառի նամակը ետ է ուղարկվել Ստոկհոլմի փոստի միջոցով։

Պարոն, ընդունեք խորը հարգանքներիս հավաստիքը։

Ն.

ՆոՐայր Բյուզանդացիին Գ. Ա. Շրումպֆին

23 մարտի, 1891 թ.

Պարոն

Ստացա հունվարի 28-ի ձեր նամակը, ինչպես նաև փետրվարի 15-ի, մարտի 1-ի և 15-ի l'Armenie-ն, որ բարյացակամություն էիք ունեցել ինձ ուղարկել: Անշափ շնորհակալ եմ: Միշտ մեծագույն հաճությամբ եմ ընթերցում օտարազգի հայագետների վերաբերյալ ձեր ուսումնասիրությունը և փափագում եմ շուտով ձեր հոդվածները տեսնել ամփոփված մի հատորի մեջ:

1869 թվականից ի վեր, երբ թողեցի Վենետիկի ս. Ղազարի վանքը, ես բիշ պարապ ժամանակ ունեցա ուսումնասիրելու հայերեն ձեռագրերը: Ես դրանց մի մասը քննել եմ փարիզի Ազգային գրադարանում, մի քանիսն էլ Orléans-ի (Կոստանդնուպոլիս) հս. Անտոսյանների վանքում: Ահա ամենը: Այսուհանդերձ ես ամբողջովին պատրաստ եմ ծառայությունս մատուցել, եթե առիթ է ներկայացել:

Թաղված հայերեն ձեռագրերի կապակցությամբ դուք կարող եք նայել «Թորոս Աղբարի» 1-ին հատորի 77 էջը՝ Գարեգին եպիսկոպոսի անշափ հետաքրքիր աշխատությունը: Անցյալ տարի, երբ հուլիս ամսին գտնվում էի Կոստանդնուպոլսում, այդ նույն դեպքը ինձ ներկայացրեց պ. Սերաֆին Ալիշանը (Հ. Ղևոնդ Ալիշանի եղբայրը) ու հավաստիացրեց, որ այդ մարդն իր ամբողջ կյանքում եղել է ավելին, քան մի արժանավոր քահանա և որ նրա հետ թաղված ձեռագրերը թանկագին են...

Անկասկած դուք ծանոթ եք Նդիշեի Պատմության հրատարակմանը՝ լույս ընծայված 1861 թ. Թեոդոսիայում պ. Խորեն Գալֆայանի² կողմից... Այդ հրատարակության առաջաբանում ասված է, որ այն արվել է ըստ Սըր Չառուայթին պատկանող մի ձեռագրի (Sir Charwhite?): Անունն ինձ թվում է անգլիական, սակայն ուղղագրությանը ծանոթ չեմ: Խնդրում եմ ասել, թե արդյոք ծանոթ եք այդ պ. Charwhite(?)-ին: Կցանկանալի իմանալ նաև թե ինչ է պատահել այդ ձեռագրի հետ և ում մոտ է այժմ գտնվում: Մխիթարյանների հրատարակած Նդիշեի բնագիրը³ միջակ է և, ինչպես միշտ անհավատ՝ գրիչների կողմից այլափոխված: Դուք հազար անգամ իրավացի եք ասել, որ ամեն բան պետք է նորից արվի: Ժամանակագրությունը, դրամագիտությունը, հնագիտությունը, հնէաբանությունը, բնաբանությունը: Դեռևս ոչ ոք լրջորեն չի զբաղվել հայ գրականությամբ, ո՛չ հայերից, ոչ էլ օտարազգի գիտնականներից: Դա իմ խորը համոզմունքն է: Ապագան, հուսով եմ, կարդարացնի ինձ:

Դուք դժգոհում եք այն դժվարություններից, որ առաջանում են Ռուսաստանում տպագրված հայերեն գրքեր ձեռք բերելիս: Նրանք, ովքեր զբաղվում են հայերենի ուսումնասիրությամբ, պետք է լինեն հարուստ՝ դրամով և հատկապես հարուստ՝ համբերությամբ: Դրա պատճառը մեր ազգի աշխարհի չորս անկյունները սփռված լինելն է, որը դժվարություններ է առաջացնում հաղորդակցման գործում, սակայն կա նաև անհոգություն ու անտարբերություն, որ թափանցել են մեր ազգային բնավորության մեջ, մեր դարավոր ստրկության հետևանքով:

Թանկագին պարոն Շրումպֆ, հաճեցեք ընդունել խորը հարգանքներն իմ հավաստիքը.

Ն.

6

Նորայր Բյուզանդացին Դ. Ա. Շրումպֆին

29 մարտի, 1892 թ.

Պարոն

1891 թ. մարտի 23-ին պատիվ ունեցա ձեզ նամակ դրել՝ ի պատասխան ձեր, նույն թվականի հունվարի 28-ի նամակի։ Սա երբեք չստացա այն տեղիկությունները, որ խնդրել էի ձեզ բարեհաճել ինձ ուղարկել՝ Նդիշի Պատմության հայերեն ձեռագրի տիրոջ՝ Զառուայթ(?)-ի վերաբերյալ, որի մասին խորեն Գալֆայանը խոսում է Նդիշի իր հրատարակության առաջարկում՝ տպագրված 1861 թ. Խեոդասիայում։ Սա ձեզ վերստին հիշեցնում եմ իմ խնդրանքը։ Սա փափագում եմ իմանալ թե ով է այդ Պ. Charwhite(?) -ը, անգլիացի՞ է արդյոք, դեռ կենդանի՞ է, ի՞նչ բախտի է արժանացել Նդիշի ձեռագրերը։

Այժմ անդրադառնամ սույն թվականի մարտի 13-ի ձեր նամակին։ 1891 թ. հունվարի 22-ի իմ նամակում ես արդեն գրել եմ, որ երկար տարիներ զբաղվում եմ մինչև օրս հրատարակված բոլոր հայերեն բնագրերի վերաքննությանը՝ ինչպես դասական, այնպես էլ անկման դարաշրջանի հեղինակների։

Ազաթանգեղոսի իմ համեմատական քննության համար ես պահանջում եմ 2000 ֆրանկ, Փավստոս Բյուզանդի համար՝ 2000 ֆրանկ, Մովսես Խորենացու «Հայոց պատմության» համար՝ 6000 ֆրանկ, Ղադար Փարպեցու (Պատմութիւն և նամակ Վահանին) համար՝ 1500 ֆրանկ, Սեբեոսի համար՝ 850 ֆրանկ և այլն, և այլն։

Սեբեոսի հրատարակությունը՝ ասպարված 1851 թ. Կոստանդնուպոլսում, ոչ մի արժեք չունի, իսկ Պատկանյանի՝ հրատարակությունը՝ տպագրված 1879 թ. Ս. Պետերբուրգում, իրենից մեծ բան չի ներկայացնում։ Կան պակաս կտորներ, կարգափոխ եղած թերթեր և բաղում աղավաղված հատվածներ, որոնք մեր լավագույն պատմիչներից մեկին դարձնում են միանգամայն անհասկանալի։

Սեբեոսի ներածականը խրթին է, որովհետև կան բաց թողնված կտորներ։ Հավանաբար սկզբնական ձեռագրերում եղել են հնության պատճառով ջնջված բառեր և անխելք գրիչը տարբեր նախադասությունների բառերը իրար է խառնել, և դրանք իսկույն աչքի են զարնում։ Սա ուրիշ բացատրություն չեմ գտնում։ Ինչ վերաբերում է ոճին, ապա այն ամեն տեղ նույնն է։

Խորին շնորհակալություն l'Arménie-ի համար։ Ստացա 20—41 համարները՝ բացի 31-ից և 32-ից, որոնք ինձ չեն հասել։

Պարոն, ընդունեք ջերմագին ողջուններս։

7

Նորայր Բյուզանդացին Դ. Ա. Շրումպֆին

24 օգոստոսի, 1892 թ.

Իմ թանկագին պարոն Շրումպֆ

Շնորհակալություն եմ հայտնում մայիսի 29-ի ձեր նամակի և այն փնտրումների համար, որ բարյացակամություն ունեցաք կատարել անգլուտ Զառուայթի վերաբերյալ։ Ահա այն ամենը ինչ է. խորին Գալֆայանը ասում է Նդիշի իր հրատարակության ազդարարության մեջ՝ «Դեպ հղև ճանաչել մեղ անգասոր (այսինքն Փարիզում) շահասեր ոմն այր պատուական սըր Զառուայթ Լաթեր 5—7

անուն՝ որ անդի անցանէր ի դարձին յարեւելից եւ Բարձեալ բերեր ճոխութիւն բազում հնութեանց զորս ամբարեալ էր ի մերոց և այլոց կողմանց կողմանց Ասիացոց աշխարհին... տեսաք ի գրչագիրս նորա և պատմութիւն մի վարգանանց և այլն:

Եթե դուք նամակագրության մեջ եք հարգոյապատիվ հ. Սուքիաս Պարոնյանի² հետ, ապա խնդրում եմ իմ կողմից նրան հաղորդել լավագույն մաղթանքներս ու նրան հարցնել արդյոք գիտե՞ս այս առթիվ որեւէ բան: Խորհնք կարծում է, թե սրբ. Չառուայթի պատկանող Եղիշիի ձեռագիրը գրվել է 7 կամ 8-րդ դարում: Դա հնարավոր է, բայց և այնպէս բավարար հիմք չէ պնդելու համար, որ դա Եղիշիի իսկական բնագիրն է: Այլ պատմիչի վերաբերյալ իմ համեմատական քննության մեջ ես ապացուցել եմ, որ Չառուայթի օրինակի բազմաթիվ հատվածները նույնպէս խաթարված են, ինչպէս և հաւին ժամանակների ձեռագրերը:

Ես կանոնավոր կերպով ստանում եմ l'Arménie-ն և վերստին թարմացնում եմ իմ ջերմագին շնորհակալանքները: Անհամբերությամբ սպասում եմ ձեր շափազանց հետաքրքրական աշխատության³ լույս ընծայմանը, որի միայն մեկ բաժնին եմ ծանոթ: Իբրև հայ, ես կարող եմ միայն ծափահարել այն հարգալից խոսքերի համար, որ վերջին անգամ արտասանեցիք Լոնդոնի բանասիրական ընկերությունում մեր դժբախտ ազգի ճակատագրի վերաբերյալ և ամբողջ հոգով շնորհակալություն եմ հայտնում:

Թանկագին պարոն, ընդունել հարգանքներիս
հավաստիքը

8

Նուրայր Բյուզանդացին Ֆր. Մյուլլերին

6 հունիսի, 1891 թ.

Պարոն պրոֆեսոր Ֆր. Մյուլլեր

Երբ 1887 թ. հուլիսի 15-ին պ. պրոֆ. Բ. Պատկանյանից ստացա թովմա Արծրունու իր հրատարակությունը¹, աչքիս ընկան հայ պատմիչի երեք վերականգնված հատվածները (էջեր 141, 166, 215), որոնք արվել են ըստ իմ Recherches philologiques-ում (Հայկական բառաքնություն) առաջարկված ուղղումների: Ուստի պ. Պատկանյանին գրեցի, որ լթե ես իմանայի թովմայի Պատմության նոր հրատարակության լույս ընծայման նրա մտադրության մասին, ապա նրան ուղարկած կլինեի այդ պատմիչի բնագրերի բաղդատության ժամանակ արած իմ բոլոր ուղղումները (թվով 200-ից ավելի):

Հանդես ամսօրյայի հունիս ամսվա համարում, էջ 182—183, որը հենց այս առավոտյան ստացա, մեծագույն հաճությամբ կարդացի թովմայի Պատմության մեջ կատարած ձեր նոր 9 ուղղումների մասին: № 6 ուղղման հարցում ես ձեզ հետ միանգամայն համամիտ եմ: Դուին՝ Դուան-ի փոխարեն, իմ բաղդատական քննության մեջ ես դրել եմ Դուին՝ առաջնորդվելով Հովհաննես կաթողիկոսի համապատասխան հատվածով (էջ 35, էմինի հրատ.)² և ծանոթագրության մեջ ես վեր եմ հանել Հ. Ինճիճյանի սխալմունքը (Ստորագրութիւն հին Հայաստանեայց, էջ 494)³ և հ. Ղևոնդ Ալիշանինը (Այրարատ, էջ 405, նրկորդ սյունակ)⁴, որոնք դուռն-ը Դուին դարձնելը սխալ համարելով, մեղադրում են թովմային, իբր թե նա Artaxata-ն շփոթել է Dovine-ի հետ: № 7-ը և 8-ը նույնպէս համապատասխանում են իմ համեմատական քննու-

Բյանը («ապստամբութիւնն», «ապստամբութեամբն»-ի փոխարեն և երկու բառերը՝ «Երեանց մահումար», որոնք տեղավորված են և «ի մոլար աւրենս-դիրնս խոսքերից հետո»): Ինչ վերաբերում է Ն՝ 1-ին, ապա ես դեռ համոզված չեմ, որ «Գրիգոր»-ը հարկավոր է «Գաղիկ» դարձնել և Ն՝ 2-ը՝ ևս չեմ կարծում, որ ոսոխամար ընթերցվածը ճիշտ լինի հաշտամար-ի փոխարեն, բայց ինչ վերաբերում է հաւուցն-ին, ես այն իմ համեմատական քննության մեջ դարձ-րել եմ Ի ՂԱԻՈՒՆ: Ն՝ 3-ը ևս ուղղել եմ լիդեացւոյն (լիդեացւոցն-ի փոխարեն), մինչդեռ դուք անհրաժեշտ եք համարում լիդեացւոցն-ից հետո ավելացնել քազաւորին՝ միանգամայն լավ նկատելով, որ մի քանի տող հետո Թովման ասում է ընդ իւր տանելով գլիլեացիին՝ եղակի թվով: Ն՝ 4-ը ես էլ ձեզ նման ուղղել եմ սպանանէ սպանանել-ի փոխարեն և Աշաւեան բառը դրել եմ Ասուդ-ից հետո (իսկ Ասուդ Աշաւեան), մինչդեռ դուք գրում եք իսկ Աշաւ-եան Ասուդ. տարբերությունը մեծ չէ: Ինչ վերաբերում է բառնայ զթա-զաւորութիւնն Պարսից ուղղմանը, ես դտնում եմ, որ բառնայ թազաւո-րութիւնն կարող է ճիշտ լինել, քանի որ դուք լավ գիտեք, որ բառնա բայը հայերենում միևնույն ժամանակ և՛ ակտիվ է, և՛ պասիվ, բառնայ թազաւո-րութիւնն պետք է լինի բարձեալ լինի թազաւորութիւնն: Ն՝ 5-ը դուք առա-ջարկում եք թազաւորեցոյց թազավորեաց-ի փոխարեն, ըստ հ. Արսեն Բագրա-տունու³ թազաւորեմ, տվյալ հատվածում, ունի ակտիվ նշանակություն՝ որևէ մեկին թազավոր հաստատել (կարգել):

Մովսես Խորենացին նույնպես գրել է (Հայոց պատմ. գիրք. 3-րդ դ. ԱԼԻԱՆ). «Ի տեղի նորա յաջորդէ Խոսրով զՍահակ», այսինքն «յաջորդ. կարգէ, յաջորդի ցուցանէ»: Ն՝ 9-ը դուք առաջարկում եք բունե բառնայ-ի փո-խարեն և պատճառաւն պաճարին-ի փոխարեն: Ահա թե ինչպես եմ իմ հա-մեմատական քննության մեջ վերականգնել այդ խաթարված ու վատ կե-տադրված հատվածը. «Մինչև ի ժամանակս գարնանայինս այնպէս բայանւոյ: Որպես և այլ թռչունք և զազանք բնաւորեալ բաժանին զժամանակս տարւոյն երկուս կամ երիս, ամարանոցս և ձմերանոցս ինքեաց կենաց պաճարին. զգարնանայինսն՝ ի բարձրագոյն գագաթունսն լեռանց և ի փապարս վիմաց, և ի վերա բարձրաբերձ հասոց կենցաղավարին, ուր հաճախ շնչէ աւղն հիւսի-սային, և ի ձմեռայինն՝ խաղան գնան ի խորագոյն երկիր, ի շերմագոյն վայրս ամբանան առանձնանան և միայն բնակին ըստ ազգս իւրեանց». Բայանաւ բայը, որ Թովման 119 էջում օգտագործել է երկու անգամ: «Ուր բնակեալ բայանայր զաւրավարն տաճկաց», «Բայացեալն են ի զազանք են եթէ թռչունք» նշանակում է «se retirer (dans un repaire), se cacher (sous terre), se teirer»: Մենք հավասարապես ասում ենք «բայեմ» կամ «բայիմ»: «Ազգք առնետից ձմերայնի բայեցեալ անշարժ կան և գարնանեացն յառնին»: Կյուրեղ Երուսաղեմի, Կոչումն Ընծայութեան ԺԸ 403 (Վիեննայի հրատարա-կություն)⁶, որտեղ իզուր տեղը տպագրել են պաճեցեալ անշարժական: Վերջի-վերջո մենք ունենք բայոց և բայ, որոնք նշանակում են Repaire (աղբ), Tanière (որջ, մենարան): Ինչ վերաբերում է պաճարեն բառին, ապա դա ֆրանսերեն նշանակում է «Se procurer»: «Les oiseaux et les bêtes, ասում է Թովման, se procurent des retraites, d'été et des retraites d'hiver»:

Հաճեցեք ընդունել, պարոն պրոֆեսոր, վսեմ

հարգանքներիս հավաստիքը:

Նորայր Բյուզանդացի

Նորայր Բյուզանդացիին Կ. Վ. Ջետեբուտենին

15 հունիսի, 1892 թ.

Պարոն

Շտապում եմ պատասխանել ձեր նամակին, որ այսօր առավոտյան ստացա: 1822 թ. Աղաթանգեղոսի Պատմության հրատարակությունը, որի մասին խոսում եք, տպագրվել է Ortakeuy-ում, Կոստանդնուպոլսից ոչ հեռու մի գյուղաքաղաքում, Բոսֆորի եվրոպական կողմում: Դուք հեշտությամբ Ortakeuy անունը (հայերեն Օրթագիւղ կամ էլ Միջաքիւղ) կգտնեք Իոաննի¹ և Բեդեկերի² ուղեցույցներում:

Իմ հերթին թույլ տվեք ձեզանից մի տեղեկություն խնդրել: Ստոկհոլմի Aftonbladet-ում³, 1891 թ. հունիսի 9-ի համարում, էջ 3, սյունակ 1-ում կարդացի, որ Ուպսալայի համալսարանի գրադարանը այլևայլ ձեռագրերի հետ մեկտեղ ստացել է 11-րդ դարի մի հայերեն ձեռագիր: Ճիշտ է արդյոք և բարյացակամություն կունենա՞ք ինձ ասել այդ ձեռագրի պարունակության մասին: Ես ձեզ անչափ երախտապարտ կլինեմ:

Պարոն հաճեցեք ընդունել վեհ զգացմունքներիս
հավաստիքը

Նորայր Բյուզանդացի

Հ. Գ. Դուք ազատ կերպով կարող եք ինձ մի տող անգամ ուղարկել իբրև պատասխան: Ինձ համար հաճելի կլինի ձեզ տալ այն բոլոր տեղեկությունները, որոնց կարիքը կզգաք հայերեն գրքերի Ցանկը կազմելու գործում:

Ն.

Նորայր Բյուզանդացիին Կ. Վ. Ջետեբուտենին

23 հունիսի, 1892 թ.

Պարոն

Լորին շնորհակալություն եմ հայտնում 17-ի ձեր նամակի համար:

Ուպսալայի համալսարանի գրադարանի ունեցած հայերեն Ձեռագիրը կարող է չափազանց մեծ արժեք ունենալ, եթե այն իսկապես 11 դարի է, ինչպես պնդում է պ. Սպիդեկթալը: Ես հակված եմ ենթադրել, որ Ձեռագրի հազարյակը հայկական տոմարով է, որը սկսվում է մեր համընդհանուր թվարկության 552 թ. հուլիսի 11-ից: Հետևաբար ինձ թվում է, որ դա 14-րդ դ. ձեռագիր է, գուցե նույնիսկ՝ 17-րդ դ. սկզբի:

Եթե պ. գրադարանավարը ցանկանա Ստոկհոլմի թագավորական գրադարանի ղեկավարության միջնորդությամբ ինձ ուղարկել այդ Ձեռագիրը, ես կկարողանամ տալ բոլոր փափագելի բացատրությունները: Ես պատրաստ եմ հոգալ ուղարկելու և հետ վերադարձնելու բոլոր ծախսերը: Ինձ ազատություն եմ ընձեռում ձերդ ազնվությունից խնդրելու մի լրացուցիչ տեղեկություն ևս: Ես շատ կցանկանայի իմանալ թե ո՞վ է այդ պ. Սպիդեկթալը, որտե՞ղ և ե՞րբ է նա ձեռք բերել այդ Ձեռագիրը, և արդյո՞ք նա տվել է, թե վաճառել է ձեր գրադարանին:

Եթե ձեզ առիթ կներկայանա Ստոկհոլմ գալ, ապա ձեր այցելութիւնն ինձ անսահման հիացմունք կպատճառի ու պատիվ կբերի:

Պարոն, սպասելով հանդերձ, խնդրում եմ ընդունել հարգանքներիս հավաստիքը:

Ն. Նորայր Բյուզանդացի

11

Նորայր Բյուզանդացիին Կ. Վ. Զետերստենին

13 հուլիսի, 1892 թ.

Իմ թանկագին պարոն Կ. Վ. Զետերստենին

Ուպսալայի գրադարանի հայերեն Զեռագիրը մի վիթխարի խաղարարական գործ է: Այդտեղ չկա ո՛չ 11-րդ դար, ո՛չ պապիրուս, ո՛չ մագաղաթ, ո՛չ կրկնագիր: Դա մի հասարակ ձեռագիր է՝ գրված Դիարբեքիրում 1730 թ., մի շատ սովորական թղթի վրա, և մի գրչի կողմից, որի գեղագրութիւնը մեծ ապավորութիւն չի թողնում: Թե՛ խոնավութեան և թե՛ անորակ թանաքի հետեւանքով ձեռագրի բազմաթիվ հատվածները դժվար վերծանելի են, նամանավանդ առաջին մասում: Ինչ վերաբերում է պարունակութեանը, ապա ես վստահ կերպով կարող եմ ասել, որ երկրորդ մասը դա հայ բժիշկ Ամիրդովլաթի աշխատութիւնն է՝ ծնված Ամասիայում (հայերեն Ամիրդովլաթ Ամասիացի), որն ապրել է 15-րդ դարում: Ամիրդովլաթն այդ աշխատութիւնը պատրաստել է 1478 թ. և այն անվանել է *Inutile aux Ignorants* (հայերեն՝ Անգիտաց անպէտ), Դա բուսական, կենդանական և հանքային բժշկութեան մի բառարան է, շափազանց արժեքավոր ու հետաքրքրական: Այդ աշխատութեան օրինակները մեծ թիվ են կազմում ու գտնվում են գրեթե ամենուր՝ Վենետիկում, Փարիզում, Կոստանդնուպոլսում և այլն: Զեռագրի առաջին մասը, ի՞նչ չեմ սխալվում, պարունակում է այդ նույն Ամիրդովլաթի մի այլ աշխատութիւնը՝ վերնագրված *L'Utilité de la Médecine* (հայերեն՝ Օգուտ բժշկութեան), կազմված 1466 թ.: Այդ ձեռագիրը ես տեսել եմ միայն մեկ անգամ, ամսույս 2-ին: Վերջին շաբաթում ես հիվանդացա և հանկարծակիի եկա, երբ իմացա, որ այն ետ են ուղարկել Ուպսալա: Հուսով եմ այն վերստին այստեղ տեսնել: Իմ կարծիքով ձեռագրի ամբողջ արժեքը կայանում է մի էջում, հատորի վերջում: Դա Մաղկազարդի վերաբերյալ ճառի մի հատված է՝ գրված բամբակյա թղթի վրա, որը, դատելով տառերից, կարող է հասնել մինչև 12 կամ 13-րդ դարերը:

Թանկագին պարոն Զետերստենին, հաճեցեք ընդունել բարեկամական ողջույններս:

Հ. Գ. Ես ձեզ խնդրում եմ ինձ ուղարկել պ. Սպիեգելթալի ծանոթագրութեան պատճենը, որի ֆրանսերեն թարգմանութիւնը բարյացակամութիւն ունեցաք ինձ հաղորդել:

12

Նորայր Բյուզանդացիին Կ. Վ. Զետերստենին

25 օգոստոսի, 1892 թ.

Իմ թանկագին պարոն Զետերստենին

Ներեցեք ինձ, եթե ուշացնում եմ ձեզ շնորհակալութիւն հայտնել հուլիսի 15-ի ձեր նամակի միջոցով պ. Սպիեգելթալից ստացած տեղեկութիւններն:

ինձ ուղարկելու համար, որոնք վերաբերում են Ուպսալայի համալսարանի հայերեն ձեռագրին: Սրան կից ձեռք եմ ուղարկում այդ ձեռագրի վերաբերյալ մի մանրամասն ծանոթագրություն և խնդրում եմ այն հանձնել պ. Բիզգլենին իմ խորին շնորհակալանքների հետ միասին:

Ինչպես ես ձեռք արդեն գրել եմ, պ. Սպիեգելիթալը դրա պարունակության, հայերեն թարգմանության տարեթվի և Դիարբեքիում արտագրված տարեթվի հարցերում ամբողջովին սխալվում է: Ինձ համար անհնարին եղավ ձեռագրում գտնել պ. Սպիեգելիթալի կողմից տրված 1652 թվականը: Արդյոք ինքն է հնարել այդ ամբողջ անհավանական պատմությունը, թե դրա հայ վաճառականը: Շատ կցանկանայի իմանալ:

Այսօր ձեռք եմ ուղարկել 1887 թ. Ստոկհոլմում հրատարակված իմ Քննասերի երկու գրքույկները: Դա կարող է հետաքրքրել ձեռք, մի մարդու, որ հայերեն է ուսումնասիրում:

Թանկագին պարոն Զետերստենն, ընդունեք
բարեկամական ողջույններս

ՄԱՆՈՔԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ուպսալայի համալսարանի գրադարանին պ. Ֆ. Վ. Սպիեգելիթալի կողմից ընծայված 18-րդ դարի հայերեն ձեռագրի վերաբերյալ.

Այդ ձեռագիրը գրված է եղել Տիգրանակերտում (այսինքն Դիարբեքիում) Գերսամ կոչեցյալի կողմից՝ Մովսես քահանայի որդու, 1730 թ. (որը համապատասխանում է հայկական տոմարի 1179 թ., որը նշված է ձեռագրում և դրան ավելացնելով 551 ստանում ենք 1730 թ.):

Գերսամը օգտագործել է շատ հասարակ ու կոպիտ թուղթ և անորակ թանաք: Նրա ձեռագիրը զուրկ է վայելչությունից ու լի ուղղագրական սխալներով: Ձեռագրի առաջին մասում բազմաթիվ կտորներ տառերի չնշման հետևանքով անվերծանելի են: Շատ թերթեր պակասում են: Այն բաժանված է երկու մասի, յուրաքանչյուրը իր սեփական էջակալումով և պարունակում է 3 տարբեր աշխատություններ:

Առաջին աշխատությունը (ամբողջ առաջին մասը, էջ 7—437) մի բժշկական և ռուսական բարձրագույն դպրոցում է՝ թարգմանված արաբերենից 15-րդ դարում: Այդ նույն ուսումնաբանությունը ես կարդացել եմ Վենետիկի Մխիթարյանների գրադարանի հայերեն ձեռագրերում, զժախտաբար հայ թարգմանչի անունը չեմ հիշում, որովհետև ժամանակ չեմ ունեցել, ըստ պատշաճի ուսումնասիրել Մխիթարյանների ձեռագրերը և որ Ուպսալայի ձեռագրի 1—6 էջերը, որտեղ կարող է պատահել նշումներ են արված եղել, պատռված են:

Երկրորդ աշխատությունը (էջ 1—22, երկրորդ մաս) ասորի քահանա Իշոխի բնության ուսումնաբանությունն է՝ թարգմանված ասորերենից 13-րդ դարում: Այդ աշխատության օրինակները գտնվում են հավասարապես մյուս գրադարաններում:

Երրորդ աշխատությունը (էջ 22—447, երրորդ մաս) հայ բժիշկ Ամիր-դովլաթ Ամասիացու Անգիտաց անպէտն է: Դա բժշկական տեսանկյունից վերցրած հանքային, բուսական ու կենդանական բառարան է: Մի չափազանց հետաքրքիր աշխատություն: Ամիրդովլաթը, որն ապրել է 15-րդ դարում, այս բառարանը շարադրել է 1478 թ., ըստ արաբական ու պարսկական բժշկական

աշխատությունների Մյուս գրադարանները նույնպես ունեն Անգլիաց աւ-
սլիտ-ի օրինակները:

Ինչ վերաբերում է 447—450 էջերին (երկրորդ մասի) ապա այն մի տե-
ղեկագիր է, որտեղ ասվում է, որ Մովսես քահանայի որդի, գրիչ Գերսամ կո-
չեցյալը արտադրել է այս ձեռագիրը Տիգրանակերտում (=Դիարբեքիր), հայ-
կական տոմարով 1179 թ. (—1730 թ. սովորական թվարկություն): Նա այդ-
տեղ խոսում է իր ժամանակի քաղաքական իրադարձությունների մասին,
այսինքն Ղանդազարի՝ Բաղավոր Միր-Վեհիսի որդու՝ Միր-Մահմուդի կողմից
Իսպահանի վրա հարձակվելու ու նրա դրավման մասին, Ահմեդ 3-րդ սուլ-
թանի իշխանությունը թողնելու ու Մահմուդ I-ի դահակալման մասին և այլն:

Հատորի վերջում կա բամբակաթղթի մի թերթ, իր լայնության շնորհիվ
երկտակ ծավալած, որը պարունակում է Ճառ Մաղկազարդի մի հատված: Դա-
տկում դրա տառաձևերից, այդ հատվածը կարող է հասնել մինչև 12-րդ կամ
13-րդ դարերը: Ձեռագրի ամբողջ արժեքը կայանում է այդ միակ թերթիկի
մեջ:

Ն. Բ. Պ. Ֆ. Վ. Սպինգելֆալի տված տեղեկություններում ոչ մի ճիշտ
բառ չկա:

Ն. Նորայր Բյուզանդացի

15, Fredsgatan, Stockholm.

25 օգոստոսի, 1892 թ.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1

1 «Արրոյն Եփրեմի մատենագրութիւնք», հ. 1, ի Վենետիկ, 1836:

2 «Արրոյն Եփրեմի մեկնութիւն թուոց» («Արրոյն Եփրեմի մատենագրութիւնք»,
էջ 235—236):

3 «Ժամանակագրութիւն, Տեառն Միխայէլի Ասորոց պատրիարքի», Երուսաղեմ,
1871, էջ 41—42:

3

1 էմիլիո Տեզա (1838—1913) իտալացի արեւելագետ-հայագետ, Պադուայի համալսարա-
նի պրոֆեսոր:

2 Այդ հոդվածը տպագրվել է հետևյալ ժողովածուի մեջ՝ Emilio Teza-Cose Armene
Venezia, RIV, 1900, T. 59, Parte 2,

3 Emilio Teza, Una lettera dei Giovani Mandacuniense, t. V, Padova. MASA.,
1889—1890.

4 Նորայր Բյուզանդացի. Հայկական բառաքնություն, Կ. Պոլիս, 1880:

5 Արեւելագետների միջազգային 8-րդ համաժողովը գումարվել է Ստոկհոլմում, 1890 թ.:

4

1 Նորայր Բյուզանդացի, Քննասեր, 1—2 պրակ, Ստոկհոլմ, 1887:

2 «Ստեփանոսի Տարօնեցույ Ասորկան Պատմութիւն տիեզերական», ի Ս. Պե-
տերբուրգ, 1885:

3 Նորայր Բյուզանդացի, Տեղեկութիւն ի գիրս պատմութիւն Ստեփանոսի Տա-
րօնեցույ Ասորիկ կոչեցելո («Հանդես գրականական և պատմական», Բ գիրք, Մոսկվա, 1889,
էջ 291—332):

4 «l'Arménie» («Հայաստան») — քաղաքական և գրական պարբերական, խմբագիր Մի-
նաս Զեռազ, Լոնդոն, 1889—1898, Փարիզ, 1898—1906:

- 5 Մինա Չերազ, գրող, խմբագիր, հասարակական գործիչ:
 6 Նախիրք—մնացել է անտիպ, միկրոթպավենը պահվում է Մ. Մաշտոցի անվան Մատենադարանում:
 7 Լույս չի տեսել:
 8 Մնացել է անտիպ:
 9 Matthieu d'Edesse, Récit de la première Croisade, Extrait de la Chronique est traduit de l'arménien d'après quatre manuscrits de la Bibliothèque du couvent de St. Lazare a Venise par E. Dulaurier, Paris, B. Duprat, 1850.

5

- 1 Գարեգին վ. Սրվանձտյանց, Թորոս Աղբար, Հայաստանի ճանապարհորդ, հ. 1, 4. Պոլիս, 1879,
 2 Խորեն Գալֆայան (Նարայն, 1832—1892)—գրող, հրապարակախոս, եկեղեցական գործիչ, թարգմանիչ:
 3 Եղիշէի Վարդապետի վասն Վարդանայ և հայոց պատերազմին, ի Վենետիկ, 1864:

6

- 1 Քերովբե Պատկանյան (1833—1889)—հայագետ, արեւելագետ, ռուսական կայսերական ակադեմիայի թղթակից անդամ:

7

- 1 Եղիշէի պատմութիւն Վարդանայ, ըստ Անձեացեաց օրինակի, Թեոդոսիա, 1861, էջ Գ—Է:
 2 Սուքիաս Պարոնյան (1831—1903)—հայագետ, հասարակական գործիչ, Մանչեստրի հայ համայնքի ղեկավար:
 3 Գ. Շրումպֆ, Ուսումնասիրութիւնք հայ լեզուի և մատենագիտութեան յարեմոտս, Վենետիկ, 1895:

8

- 1 Թովմայի վարդապետի Արժրուհւոյ պատմութիւն տանն Արժրուհեաց, ի լոյս էած Ք. Պատկանեան, Ս. Պետերբուրգ, 1887:
 2 ԵՅ թվ հանսու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ Պատմութիւն Հայոց, ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին, Մոսկվա, 1853:
 3 Ղուկաս վ. Ինճիճյան, Ստորագրութիւն հին Հայաստանեայց, Վենետիկ—ս. Ղազար, 1822:
 4 Ղեոնդ հ. Ալիշան, Այրարատ Բնաշխարհ Հայաստանեայց, Վենետիկ, 1890:
 5 Արսեն վ. Բազրատունի (1790—1856)—հայագետ, լեզվաբան:
 6 Երանելոյն Կիւրեղի Երուսաղեմայ հայրապետի Կոչումն ընծայութեան, ի Վիեննա, 1832:

9

- 1 Ադոլֆ Իոանն (1813—1881)—ֆրանսիացի գրականագետ, ճանապարհորդ և աշխարհագրագետ: Հրատարակել է „Guides Joanne“ ուղեցույցը, որը պարունակում է պատմական ու հնագիտական նյութեր, Dictionnaire des communes de France (1864), այդ ուղեցույցը հետագայում վերամշակեց նրա որդի Պոլը, հետևյալ խորագրով՝ „Dictionnaire géographique et administratif de la France (1891—1902)“, 7 հատորով:
 2 Կառլ Բոդեներ (1801—1859)—գերմանացի գրող, գրավաճառ: Նրան հուշակ բերեց իր „Guides à l'usage des voyageurs“ ուղեցույցը:

11

- 1 Ամիրդովլաթ Ամասիացի, Անգիտաց անպէտ կամ բառարան բժշկական նիւթոց, Վիեննա, 1927:

12

- 1 Ղանդաշար—Աֆղանստանի հին մայրաքաղաքը: